




ԶՄԻՌՆԻՒՄ 1 ՆՈՅԵՄԲԵՐ 1862

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԳԻՆ 3. 50 ԳԸ. ՀԱՏԸ. ԲԴ. 2

ԴԵՍՏԱՆԸ արայժմ պատմութիւնք՝ օրը հեղ. ինչ հրապարակուի: Տարեկան գինն է 2 արծաթ մէճիտ, և վեց ամսուանը 2 արծաթ մէճիտ կ'ընտելի: Զամբոս ծախքն արտագրուողին լրաց:



ԹԵՐԱ ԲԱՆԱՍԻՐԱՆՆԵՐ

ՀՆԱՐԹ ԵՒ ԳԻՒՅԹ

Նոր տեսութեանց, հեղինակութեանց կամ ոճերու սկզբնաւորութեանց վերաբերեալ պատուոյ համար մարդոց իրաւունքները՝ գիտութեանց ու բարձր ուսմանց պատմութեանց մէջ անդադար կուոյ պատճառ եղած են: Օգրմանալի բան է, որ դեռ ասոր վրայօք ինչպէս որ պէտք է աւելի ունենանք արուած չէ. և 'ի պալատի լաւագունին' քանի մը վեր 'ի վերոյ խորհրդածութիւններ ընեմք, որպէս զի գիտութեանց պատմութեան զբաղող պատանի ընթերցողներուն օգնութիւն մը տուած ըլլամք:

Այս յօդուածն ուսնապատանին մէջ Հնարք և Գիւտք համանուն են. սոյն պէս ալ էր շատ դարեր առաջ: Ինչ հանուր, դործածութեամբ՝ առաջինը կը նշանակէ քանի մը կերպաւորութիւնը, որ դեռ հարկաւորապէս զոյգացած չըլլար պիտի, թէ որ չի հնարուէր. և երկրորդը կը նշանակէ գտնուիլը այնպիսի քանի մը արդէն կար, և պիտի մնար ալ

միշտ, թէ որ գտնուէր կամ ոչ: Վաւերն որոյ մեծ սխալմունք մ'ըրած կ'ըլլանք թէ որ կալիլէոս (1) հեռադիտակը հասնէ և Հարվէյ (2) արեան շրջաբերութիւնը հնարէր, ըսենք նէ: Նոյնպէս ալ սխալ է Մաքսթի (3) Մաքսիմիլիանի համար ըսածը թէ "փառասիրութեան և վրէժխնդրութեան գտակն ու ստերգման հնարին էր": Կրնամք երեւակայել զկարելիութիւնը հեռադիտակի մը որ երբեք հնարուած չէ, կամ սուտ երգման մը որ երբեք տոնուած չէ. բայց, մարդս որքան որ ապրի իր արինը շրջան առնէ պիտի, և փառասիրութեան ու վրէժխնդրութեան զգացմունքը իր մտքէն ծնին պիտի: Այս երկու բառերը իրարու հետ այնքան նմանութիւն ունին, որքան որ առեղծուած ու տեսուած (theorème) բառերը երկրաչափութեան մէջ, մանաւանդ սա պարագային մէջ՝ որ երբոր հնարողութիւն կ'ըսուի, վերջապէս գտակութիւն կ'իմացուի: Նորագիւտ մեղանի հնարող մը՝ որ մինչև իր ժամանակը այն տեսակը գտնուած չէր, կը գտնէ՝ որ գիտորի ու երկաթի ծծմբուտի բաղադրութիւնը՝ երկարատե սև հեղանիւթ մը կ'արտադրեն: Ամեն հնարք երեւան ելլէ լին առաջ պէտք է մէկ գիւտ մ'ըլլայ. բայց աս ըսելով ալ պէտք չէ հետեցուի որ ամեն գիւտ

իր հետը հնարք մա՛լ կը բերէ: Այսու ամենայնիւ քանի մը պարագաներ կան, ուր որ նախագաս որոշմունքները չեն կրնար խօսքերու ներկայ դործադրութիւնը յայտնելու, ք. բնութեան մէջ տնկաղի (potasse) երկբրոմուտը (bichromate) երբեք չիկար, ու երբեք գտնուած չէր. ապոր տարերքը՝ զան հնարողներուն դործանոցներուն մէջ բաղադրուած էր: Բիմիադէտները ասիկա հնարք է չեն ըսեր, այլ լոկ գիւտ մը:

Հնարք և գիւտ երբեմն ճիշդ և երբեմն սխալ նմանութիւններ ունին՝ դործականի ու տեսականի հետ. բայց ասոնց երկուքն ալ պէտք է որ իրենց դործական ու տեսական կերպերն ունենան: Արկիւրի ոչ - զնգային ձևին՝ լուսնի ընթացքին վրայ ըրած արդիւնքը, տեսականաբար գտնուեցաւ, և լուսնի փոփոխութիւնները դործականաբար գտնուեցան: Շոգեմաւուց մէջ առաջին անգամ՝ շոգեկնից դործեաց կափարիչ դործածելու սովորութիւնը՝ ըստ գիւտաց բանուորողութեան մը գտնուեցաւ, որ դործական հնարք մ'էր: (Հարմարեալ է)

ԲՈՒՍԱԿԱՆՍՑ ՀԱՃՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Բնութեան մէջ առող ամենէն խոնարհ ծաղիկը արարչութեան մէկ հրաշքն է: Թէ բուսականի առժամանակեայ անհատի մը պէս վրան պարզապէս աչք մը նետելով, որու պաշտօնը՝ տունկէն առաջ եկած տե-

(1) Galileo Galilei. (2) W. Harvey. (3) Macauley.

սակը վերած լցնելու և նոր ցեղ մը կազմելու կը ծառայէ, և թէ առատաձեռն Վախախնամութեան կատարեալ ստեղծութեամբը մէկին պէս նկատելով զան, Որ ոչ միայն մեր ապրուստի կարևորութիւնները մատակարարել տուաւ անոնցմով, այլ և բոլոր բնութիւնը աչքերնուս ներդաշնակաւոր երևցուց, որ եղանակով որ դիտելու ըլլամք, բնութեան այս վարպետօրէն արարածները մեր նկատմանը միտքը մշակելու համար տակաւին ուսման հիանալի առարկայ մը կը հանդիսանան, և այս հաճութիւնը աւելի կը բազմապատկի, երբ բուսական թագաւորութեան աններե գեղեցիկութիւնները զննելու համար՝ դիտութեան օգնութիւն կը խնդրենք։ Այն ժամանակ կը տեսնուի որ ծաղիկ մը, ամէն մէկ մասը, իր զարմանադոյն և բացուած պսակէն սկսելով մինչև իր արմատին մազանման մանրամասնութիւնները որոնք իւր հիմքն են, ամէն ալ իրենց զգալի ու էական պաշտօններն ունին կատարելու։ Ասկէ աւելի էնչ զուարճալի բան կրնայ ըլլալ աշխարհի մէջ, որ մեր Արարչին հետ իր զործոց հիանալի զօրութեանը մէջ ժուռ կու գանք։ Ասոնց վրայ որքան

որ իբրև ուսում մը նայինք, այնքան պէտք է հիանալք տիեզերական արարած բարոյ համար աստուածահաճ նպատակին յարմար գալուն վրայ։

Մարդ մ'որ ծաղիկ կը մշակէ ինքզինք միշտ երջանիկ կը կարծէ։ մարդու մը դէմ չարութիւն խորհելու առիթ չունենար, և յաճախ կը զգուշ մարդոց տղայական տարբերութիւններէ։ յուսահատութեան խոյս կու տայ, և իր յոյսը միայն իր բոլորտիքը աճող հրաշալեաց ստեղծողի վրայ է։ Երբ որ աշխարհը իրեն մոտ իրենց և այս կեանքը ձանձրալի, ինքզինք բնութեան մէջ որ նետէ հոն մտնելու շատ բաներ կրնայ գտնել, թէ որ երբեք յուսահատի՝ իր երեսը կը դարձնէ աշխարհի խաբէբայ պատրանքներէ ու սեպէ թէ անառիկ մը մէջ կը մտնէ, ուր իր բոլորտիքը տեսած ծաղկանց խումբերը, որոնց հոտերը հանդարտ օդը կը լեցնեն, իրեն մտնելու խաբէբայ մը կու տան և կ'ըստինքն նայելով որ դեռ աշխարհի երեսը մնացած գեղեցիկութիւններ կան։ Իր միտքը այս սիրուն ծաղկներէն անոնց Արարչին ու խնամողին կը դառնայ, և այն օրհնեալ ժամանակին ուր որ քրովքեալ իր հրեշտակի պէս պիտի սաւառնէ արքայութեան լուսափթիթ վարդերուն մէջ, որոնք կենաց գետեղերը կ'աճին։

Ճաշկոնց ընուն շուտ կը սիրեմ.
Ի իրենց ունեցած ցուց շքեմ.
Եր տուտան աչքին ընկնին
Եւ իրկուս կը թարթամին։

ԲԱՌՖԱՆՍ ԶՕԱԳ

ԴԱՓՆԵՑ

Դափնէն զգալու է, ու սիրուն.
Եւ Ապուս զգալու է, ու սիրուն.
Սերն ասոնց Լուսնի մէջ զգալուն
Թեւեւ ինչ մէկ իւրեանցին.
Իր փառաւոր բոցին շահուն։

Դափնէն յանաւ զապ իւրեանցին,
Կարգիլ է քեզ Ապուսին.
Աս իւրեանցին է քեզին.
Բայց արդեօք զապ իւրեանցին
Սերն է՝ իւրեանցին յապուն։

Երբ իւրեանցին իւրեանցին,
Կ'արարանայ իւր յարգանայ.
Ունին իւրեանցին ու դէմ ինչոյ.
Պարտաւորութիւնն իւրեանցին.
Բայց երբեք է իւրեանցին յապուն։

Անոր հետոյ զապ էրեւել
Կ'այն, որ ալ բնութեան է,
Ունին իւրեանցին իւրեանցին.
Յաւերթաւոր զապ իւրեանցին
Երբ է քեզին հաճութիւն։

Կը բաշտայ, բայց է քեզին իւրեանցին.
Հայրն է քեզին իւրեանցին.
Կ'արարանայ իւր յարգանայ.
Ու իւրեանցին արգելէ իւրեանցին.
Բայց Դափնէն իւրեանցին յապուն։

Ապուսին զապ է իւրեանցին.
Չան քեզին իւրեանցին իւրեանցին.
Եւ սիրուն է քեզին յապուն.
Դեռ բաշտանէ իւրեանցին
Ճեղքէ քեզին ու իւրեանցին։

ՄԱՐԲԱՆՏԵԼ

ԾԱՂԱԿՆԵՐ ԲԱՐԲԱՆՈՐ		Հարունակութիւն	
Բացեց	Convolvulus. Սարմալէ	L. -eron	Տկարութիւն։ Խոնարհութիւն։
Իրաքին	Polianthes Tuberosa. Թեղեթ	Tubereuse	Զգացմունք։ ցանկութիւն։
Դ			
Գաշշուկ	Humulus Lupulus Հեղեղ	Houb'on	Աղցալիկութիւն։ անկողնութիւն։
Գառնադմակ	Sempervivum Բայա Ժորաղու	Joubarbe	Խելք։ Խոնարհութիւն։
Գարնամաղիկ	Primula Իւր պարսկէնէն	Primevère	Յոյս։ զգացող։ Երբ
Գենտիան	Gentiana Շինդիլան օթու	Gentiane	Ատերութիւն։ անարգանք։
Գերան. կարմիր	Geranium Արեւ	Geranium	Անմուտութիւն։ տգիտութիւն։
— բարակաբեր	—	— terne	Տկարութիւն։ Թափիծ։
Գի	Juniperus Արեւ	Genevrier	Միտնելութիւն։ պշտականութիւն։
Գիւնեղաւոր	Mirabilis Ja'apaլեճէ Երբ	Belle de nuit	Վախիկութիւն։ անմուտութիւն։
Գինձ	Coriandrum Sativum. Գիւնձ	Coriandre	Զաւարէ։ Զգացմունք։ տաղանդ։
Գորտաւոր	Ranunculus Տեղեթ	Renoncule	Յանկու ջիւղ։ գեղեցիկութիւն։
Դ			
Դափնի	Laurus Nobilis Տեղեթ	Laurier	Փառք։ յաղթութիւն։
Դեղձի ծաղիկ	Fl. Persica Շինդիլէն	Fleur de Pecher	Դափնիկութիւն։
Դեղձի ծաղիկ	Delphinium Սերայ իւրեանցին	Pied d'Alouette	Թեղեթ։ Կարգիլ սիրտ։
Դիւնիկ սոխակ	Crataegus Oxya-Ա. Գիւնձ	Aubépine	Բաղդր յոյս։
Ե			
Եբենու	Diospiros Ebenum. Ապուս	Ebenier	Դափնիկութիւն։ շնորհք։
Եղազենի	Fragaria Չիւն	Fraisier	Դեղաղանդութիւն։ յափշտակութիւն։
Եկրան	Carduus Տեղեթ Կիւնի	Chardon	Խոտութիւն։ Խոնարհութիւն։
Եղեթեթ	Helleborus Պաշտական օթու	Ellébore	Սիրուն խելք։
Եղեթի	Pinus Չափ	Pin	Լոյս։
— խոտ	Artemisia Absintium Փեղի	Absinthe	Սիրայ տանջանք։
Եղեթ	Arundo Գալեթ	Roseau	Աժուշտ։
— ջրային	—	Aquatique	Աղցալիկութիւն։
Եղի	Urtica Բալեթ	Ortie	Աղցալիկութիւն։
Եղեթի	Yucca	Yucca	Մեծութիւն։
Եղեթեթ	Asphodelus	Asphodèle	Կորունկութիւն։ անմուտական։
Երկուկ	Anthemis Փափաք	Camomille	Խոնարհութիւն։ Ընդդիմաբան։

ԱԼ. ԵԼԻՍԲԵՐԱՆ

ՀԱՄԼԵՐ

ԵԼԵՐՈՒԼՈՒ Բ.

ՏԵՍԱՐԱՆ Բ.

Պրոֆեսոր տան մէջ անհետ կը
Պրոֆեսոր ու ԲԵՆԵՍԱՆՏՈՒ իւրեանցին։

Պրոֆ. Սա տակն ու սա տոմսակն է
ըն իրեն տուր, Ռեյնալտոս։

Ունց. Պրոֆ. աղէկ, տէր իմ։

Պրոֆ. Պրոֆ. ինչպիսի բան մ'ը
րած կ'ըլլաւ, սիրելի Ռեյնալտոս
որ իրեն այցելութեան երթալէդ ա
ռաջ՝ անգամ մ'իր կացութեան վի
ճակը հարցնես։

§ Ազգոյ. Daphné; Դափնէն յաւերժապար
ըստ գիշարանից գալիսի փոխակերպելով, Ա
պղնձին նա իրուած է։

Ուրիշ. Իմ միտքս ալ անի էր, ապա :

Պաշտ. Հաստ ապրիս, աղէկ ըսիր, պիտո աղէկ ըսիր : Հասկցա՞ր, պաշտոն, առաջ սա հարցուր որ փարիզի մէջ որքան Տանիմարքայիք կան. անկէ 'տք' ինտոր են, ո՞վ են, ինչ միջոցներով ու ինտոր ընկերութիւն կ'ընեն և իրենց ծախքն ո՞վ կու տայ : Աս չըջաբանական ու հնարանդիր հարցմունքներովդ, թէ որ կը նայիս որ տղաս կը ճանչնան կոր, քու հարցմունքներուդ նկատող նպատակէն կըտոր մը հեռացիր, հոգ չէ. ինքզինքըդ այնպէս կը լլեցնուր, թէ դուն ալ հեռուանց - հեռու իրեն հետ ճանչուորութիւն մ'ունիս, ու ըսէ՛ որ — Ես իր հայրը գիտեմ, իր քարէկամերն ալ կը ճանչնամ, — սէլ մ'ալ իրեն հետ քարէկամութիւն ունիմ. — Հասկցա՞ր հիմայ, Ուրիշաւոյ :

Ուրիշ. Հրամարէք, տէր իմ, պիտո աղէկ :

Պաշտ. Ուրիշ մ'ալ իրեն հետ ճանչուորութիւն ունիմ. — Բայց, ի՞նչս, այնքան չէ. սակայն, ինչ որ ըսածս այն է նէ՛ այն մէկ ինքնիքն մէկն է. սա՛ ի՛նչն է, նա՛ ի՛նչն էրով լեցուր. — ասկէց զատ սիրտդ ինչ սուտ որ կ'ուզէ նէ շիտկէ. հա՛, սա միտքդ ըլլայ որ իր պատուոյն դպչելիք բան մը չընես. աս աղէկ միտքդ պահէ. սակայն մտքիդ եկած խենթութենից և փութութեան պակասութիւնները, որոնք երիտասարդութեան և աղատութեան պիտո նշանաւոր ու սիրելի ընկերներն են՝ ջրդէ՛ անջնը :

Ուրիշ. Չոր օրինակ, նարար՝ տէր իմ :

Պաշտ. Հը՛հ, խմել, դէնքով — խաղաղ, երգում — ընել, կուտասիրութիւնը, անպարկեշտ կանանց հետ տեսութիւն ընել. — քեզ մինչև այս չափի հրաման կու տամ :

Ուրիշ. Տէր իմ, այս բանս իր պատուոյն չի դպչի :

Պաշտ. Ճշմարիտ չէ. դուն ալ պատուէրիս համը չի պիտի փախցնես. դուն իր վրայ՝ անառակութեան կից եզող էվէլօք զրպարտութիւն մը չի պիտ' ընես. իմ միտքս աղ ըսել չէր այլ՝ իր պակասութիւնները այնպէս վարպետութեամբ մը պիտի ձեռք առնես, որ աղատութեան պիտո էվէլօք

ըլլալէն առաջ — եկած արատներուն պէս երեւան միայն. որոնք պատանու թեան վառվառն խելքի բարակամութիւնները և չընտանեցած արեան կրակոտութիւնը կը սեպուին :

Ուրիշ. Բայց գերապատիւ տէր, — Պաշտ. Միայն. հա՛, դիտես աս բաներս ինչու համար ընես, կ'ըսես :

Ուրիշ. Ճշմարիտ, տէր իմ, ես ալ անի դիտեալ կ'ուզէի :

Պաշտ. Տակաւին չի հասկցա՞ր մի, պարոն. իմ նպատակս սա է որ, ու կարծեմ, տեսակ մըն ալ ասպհով կեղծաւորութիւն մըն է. դուն այս թեթեւ արատները ու թերութիւնները որդւոյս վրայ նետելով՝ որպէս թէ սիրուն ու մաքուր բանի մը վրայ կըտոր մ'աղտոտութիւն մ'ըլլար, խելքըդ կ'ըզգայ կոր, դուն խօսակցութեանդ մէջ՝ արդէն վերոյիշեալ յանցանքները երիտասարդին վրայ տեսած ըլլալու պէս. զան յանցաւոր կանչես նէ՛ հաւատի եղիւր որ ան ալ, իր մէկ — երկու խօսքին մէջ — տեղը՝ քեզի. Յորդիւն Աշտ, կամ Բարեկամ, կամ Աշտ-ախան Տէր իմ, կ'ըսէ. — ալ, մարդուն վիճակին ու քաղքի մը մէջ դորձածուած խօսակցութեանց ուժին համեմատ :

Ուրիշ. Պիտո աղէկ, տէր իմ :

Պաշտ. Անիկ 'տե, պարոն՝ բան կ'ընէ. — ը՛հ, դո՛ւն ըսէ, բան — ինչ կ'ըսէի կոր — պատարագ — վկայ, բան մը պիտ' ըսէի՝ մոռցայ, — մեր մնացի :

Ուրիշ. Բանի մը խօսքին մէջ — տեղը, կ'ըսէիք կոր :

Պաշտ. Հա՛, քանի մը խօսքին մէջ — տեղը՝ Հա՛ եւ, հրամարէս, կ'ըսէք, — Ես այն աշտ-ախանը կը ճանչնամ. երե՛կէր ինչ մէկ-ը փխայ զինք, այսինչ մարդուն հետքէր, չէ՛, այսինչ մարդուն հետքէր, — Ըսածիդ պէս ալ նարար խաղաղ — արեւն ու անառակութիւն ըրած ծամանակ մըն — հա՛. — որ է արեւ — ծամանակ՝ գիտես անգամ մ'ալ խաղաղութիւն էր — Հա՛, աս ալ կայ եւ. օր մ'ալ զինք ողորմածութեամբ արեւը (իմա՛, բողոքոյ) մտիւլը փխայ. — ասին 'տք. — հասկըցա՞ր մի հիմայ. ասանկ սուտումնաւ բաներ ջրդէլովդ՝ Ճշմարտութիւնը

կարծովդ կը բռնուի. և ահա՛ աս կերպով է որ մենք երբեմն հողմային որոգայթներով, և իւրաքանչիւր մարդու յօժարութեանը յարմար — եկող փորձերով խեղացութեամբ ու կեղծաւորութեամբ մը, ուղղակի բաները, անուղղակի միջոցներով երեւան կը հանեմք : Ասանկ ալ դուն հիմայ, նախազեկոյց դասերով ու խրատներով պիտի վարուիս զաւիս համար, անանկ չէ. միտքս հասկցա՞ր մի հիմայ, չի հասկցա՞ր, հէ՛ :

Ուրիշ. Այո՛, տէր իմ, հասկցայ :

Պաշտ. Աստուած հետդ ըլլայ, երթաս բարով :

Ուրիշ. Անիկ աղաս, —

Պաշտ. 'Ինչ ինքնիրենդ՝ անոր ունեցած հակամարտութիւններուն դիտողութիւն ըրէ՛ :

Ուրիշ. Կ'ընեմ, տէր իմ :

Պաշտ. Ու թող որ իր սրտին ուղածին պէս ալ միտքն եկածը զրույէ :

Ուրիշ. Պիտո աղէկ, տէր իմ :

Ուրիշ. Երթաս բարով. — ինչ է ան, Ուրիշաւ, բան մը կայ :

Ուրիշ. Ո՛հ, հարիկ, հարիկ, այնքան սարսափեցայ որ :

Պաշտ. Ի՞նչ բանէ, Աստուած սիրես :

Ուրիշ. Տէր իմ, ես իմ խցիկիս մէջ կար կը կարէի, անդիէն Լորտ Համլէթ — բաճկոնին կոճակները քակուած, զլուխն անխօյր, դուլպաները՝ աղտոտած, կապերը քակուած ու մինչև կոճերն իջած. երեսին դոյնը շապիկին պէս դեղնած. ծունկերը իւրարու պլուկելով. ու դէմքն ալ այնպէս խղճալի ու զթաշարժ տեսնուած քով մը՝ որ դիտես թէ սոսկալի բաներ պատմելու համար դժոխքէն ելեր է. — յանկարծ դիմացս ելաւ :



ՌԵԴԱԿՏՈՐԱՆԻ ՄԵՂԱՆԸ

ՀԱՅԿԱԹԱՆԻՆ ՍԵՂԱՆԸ
Օրագիր Տիկնոնց
Crinoline — Մալաֆ — Հաշմաղաթ.
Մալաֆ. Գղղ. Crinoline (սրկնոնց)

որ Crinum կամ Crinole (քրինոլե , քրինոլ) ծաղկին փաղաքշահան է , կանաչ անոթեղևով միջնաքաշկուն ըլլալով քանի մը տարիէ 'ի վերէն անկանառնեանք . որն որ այնքան ջերմ ընդունեալութիւն գտած է 'իրենց մէջ , որ կրնայ ըլլալ կին 'որ աւելի աղէկ ուղէն էրիկը կորսնցունելու քան թէ իր Գլխաւորութիւնը :

Քրինոլե-ն է Գլխաւորաց ցեղէն են , որոնց արմատը կամ ցողունը հասարակօրէն սոսի է ու տաք դըրութիւն կը սիրեն : Հնդկաստանի , Ափրիկէի և Ամերիկայի քանի մը կողմերը շատ կը բուսնին : Ասոնց ծաղիկները հասարակօրէն երկայն կոթուսի մը կատարը կ'ըլլայ . զէս 'ի վար հակած , ինչպէս է հասարակ Գլխաւոր (Lilium candidum . L .) և շնորհքնին խիստ կը նմանի զանազակի , որոնց ձևին յարմարեցած են նաև կանաչ մալաքֆիէր . և կայ մշէր-նէն մէկ տեսակ մը 'որուն թէ գոյնը և թէ հոտը շատ աղնիւ են (crinum Amabile . Don) :

Կ'ըսուի թէ անաշխն հնարողուհին շատ նիհար անձ մ'ըլլալով և ինքզինքը մոռտ աղջկան մը տեղ կ'ըլլեցնել տալ ուղեւոր իր խոտապէտին 'որ զէր մարմինները կը սիրէ եղեր , այս հնարքը մտածեր է . և երբ որ հասարակ եղեր է 'քրինոլե (crinoline) յարմարուցներ են , որ քրինոլե (crinole) մէկ դաճաճ տեսակն է , և Գլխաւոր կրնայինք ըսել :

Մալաքֆի բառը Արեւելի բնակիչները յարմարեցուցած են կ'երեւի սոյն Գլխաւորութեան քաշկունքէն : Հաղուստին . վասն զի սոյն հնարքը իւր ըրմի պատերազմին ժամանակները մըտցուած ըլլալով 'ի յիշատակ Աւլաստուպոլսոյ Մալաքֆի անուամբ գիւն կին 'որ Գլխաւորութեան ձևն ունի եղեր , մալաքֆի միջուկ են անունը : Հիտակը շատ խորհրդաւոր , իմացնել ուղեւոր , որ օրիորդը հասարակօրէն անտոյնի գիւնակներու նմանութիւն ունին :

ՄԱՆԱԲՈՅՆ ԶՐԱԾՔՆԵՐ

Ջրգիլ - Գլխաւորի ձանձ - Վառածի կանաչ հաղուստներու վրայօք ըրած խորհրդածութեանց մէջ , սա

հետեւեալները կը պատմուի իբր արտաւէպ :

Անդամ մ'ալեկոծութեան ժամանակ շրջած նաւակի մը մէջէն ծովն ինկնողները չնայիտ 'աղաւին եղեր ' թէ որ կանայք ըլլան եղեր , որոնց մալաքֆիէր , ծովուն երեսը իբրև փամփուշտ ուղեցնելով իրենց բաժկոնները , ազատեր են թէ զիրենք և թէ հետերին եղած մարդիկը : — Պինտ սաստիկ հովի մը ժամանակ լայնուռոյց մալաքֆի մ'այնքան հողմ լեցուեր է , որ մինչև երկինք թոցուցեր է զօրիորդ մը , որ անթափութեան ժամանակի մը հանգիստելով ' առանց շատ աշխատութեան և առանց հրացանի բաւական թոցուն (իմա անստակ եւ ընտասարդ) որոսցեր է : — Եւրամներու սեռմին մաքսը ծանր երեւցած ժամանակ , տիկին մը իր մալաքֆիէն մէջ շերմանոց հաստատելու փորձն ըրեր ու բռնուեր է : — Եւրամ մը մարդուն մէկը հարիւրի մօտ հաւ գնելով , պահելու տեղ չունենալուն , իր կնոջ մալաքֆիէն տակ պահեր է մինչև հաւանոց մը շինելու :

Դեռ ուրիշ աստիկ բաներ շատ պատմուած է , որոնք մարերինս ինչ կամ ժամանակ կը պատմենք : Տեսած ենք քանի քանի անգամ , որ — անձրև ժամանակ մալաքֆիէնքը պատուական անձրևանոցութիւն ըլլած են — հողմի ժամանակ աղէկ առադապտութիւն — շատ անգամ փախուղ մարդոյ աղէկ ապաստանարան — նեղ փողոցներու մէջ ապահով պահել (barricade) — երբեմն մէջը շունք ու կատուներ պահուած են — երբեմն պարահանդէսի մէջ (1864 - Յուն վար) պտուտակաբու (Valse) խաղացուած ժամանակ ' զարհուրելի մալաքֆի մը , ոչ միայն զոյնուն երիտասարդ մ'ըղգետներ է , այլ և մշէն կըր բարձիկ մը ձգեր է (որ իր նստելուքին զարդն է եղեր , կեցցեհորելուկ) որպէս զի սիրելի երիտասարդը մէկ տեղը չի ցայցնէ :

Կենք աստիկ բաներ պատմելու ախորժակ չունէինք նեւալ , ոմանք աղնաւանք կը չեն զմեզ 'ի գիմաց ոմանց բանագէտ աղնուհեաց , թէ ԳԻՄԱԿԻ ԸՆՏԱՆԵԿԱՆ է կ'ըսէ ու ընտանեկան նիւթ մը չունի , և թէ

ըստը նիւթերը խրթին գրուած են եղեր , կտոր մ'աւելի պարզ գրուի նեւալ չանկանալի կ'ըլլայ եղեր : աստորանջանաց վրայ Ափեղցիկը այս անգամ պարզ գրելու աշխատեցաւ , ինչպէս որ անցեալները 'որ Աւելնեղու Աւետատուուէնց մէջ խոտապած էր :

Կ . Պօլսոյ թղթակիցնիս հետեւեալ կը գրէ մեզ :

Կ.Պօլսոյ , 30 Հոկտեմբեր 1862

... Եւ այժմ աղջակներու անոց մը չկայ . ուրախ զիճակ ' աղջկայն շաղկապատակութիւններէ , հակոտնեցողէմ կըսուէն , զորոտուէն : ու ուղի տղի ընտանի մօտնութիւններ կ'ըլլեն : Եւրամ բազմիկ նպատակին կարող չեղաւ ժամանակ այնչափ ատեն անհամբեր սրտով իւր միակ առաջնորդն , ուղեցոյն , ու դաւադրանք (Մանաշաղկութիւն) խաւարին մէջ սրմունքն ետք ' կրկին խաւարին մէջ կորսնցուց զայն ու ձեռնաւանդն , անոր , անօրնական մնաց . . . մէ . . . Տեղ քեզնէ և դաւադրէ : Թաղական խորհուրդներն անկարգ անկամեն , Պատրիարքարանը քրեան վըրայ մնացած ու անգլխաւոր , Գործակալն անխնամ Սօւրբ-Փրիկէն չիւանդ անոց քանի մը անխիղճներու կապուտ կապուտ եղած , են , են , մը մէկը նշանակեմ : — Ասոնց հանգիստ ապակեր , Արեւելեան Բնիկութեան Թատարը փառաւոր կերպիւ վերականգնելու կ'ըշտալմէ , զեղողէմ գերատանուհիներ կը հայթայթենք , ու աղիւստակտանի մօտ ինչպէս նաև առկա պէտականք (Եթէ ներքէն է ըսել) առ հասարակ արք և կանայք ծերք և երիտասարդք շարաթը չորս անգամ խառն բաղմութեամբ լրար վրայ կը գիլուն , ան ալ չէ թէ բան մը հասկնալու ու բարի գառ մը առնելու համար (ներկայացուցածնին իսկ անհամ անձանքի բանքն են) ալ ' այլ գիտականութիւն միջով անհետ : Եւ անքի բացը բռնելով , զեղցիկ օտարներ ու անխիղճներ անտեսելու ' կամ ' թէ մէկմէկու նորաձեւութիւններն մեծ գառ մը առնելու : Կը ըսեմ թէ Թատրական Բնիկութեան այս տարի նոր ընտրած մէկ գերատանուհի օրիորդը պղտարիկ է և զէր , ուստի քանի մը և զվաստարուէս հաւկիթ երիտասարդ մը ' այնքան դանդաղ ու սիրահարուէր է որ (աղալը Եւրամ) մօտեցաւ ներկայացնելու խաղի մէջ , ինքն ալ գերատանու պիտի ձեւանայ եղեր որպէս զի իւր սրտին քաղցր առարկային աւելի մօտ լինի . Չորս անձ և զոյն խոտաւանք մէկ անխիղճ անախտ ընկալող աղջկա . . .

“ Հատ կատակործան է , կ'ըսէ Ապուլոսապուր , արեւելի այս կողմերը բնակող աղջկանց այժմեան նորասիւրութիւնը : Հայը իր թաղը կորսնցնել տալու , կամ աշխարհէ վերցնելու համար , զան կրողներուն միւսը կրծելու հակամարտութիւնը ունեցաւ կամ կրծել տալու առիթ տուաւ , և նոյն միջոցներով , առանց վերջը մըտածելու , առանց իր կիբքը զսպելու

* Գլխաւոր . Զուգուրկուակ լեւելի ' քրինոլե .

յաջողեցաւ վերջապէս ձգելու զան
այնպիսի վիճի մը մէջ՝ ուր որ ոչ
մարդ կրնայ համարձակիլ որ իջնայ
և ոչ մեքենական զօրութիւն մի կա-
րող ըլլայ պիտի վեր հանելու, այլ
անոր բերանը կեցած և վար նայած
ատենը՝ ողբալով անոր մէջ թափած
արտասուքները լեցնեն պիտի զվիճը՝
որ այն ապաշխարութեամբ թեթեւցած
թաղը արտասուաց լճին երեսը՝ լու-
ղացած ժամանակ՝ ուրիշ նոր վէճ
մ'ալ ծագի թէ մի ըլլայ պիտի ա-
ռջին յափշտակողը։ Ըսանկ բան մը
մտածելն անգամ սրտի ցաւ կուտայ։
— Բայց Հայը, մեղք է ըսելը, ա-
ռանկ պարագայի մը մէջ է կ'ըսէ
Աստուծոյն դարձեալ յարանորէն
ըսելով — ուրեմն, Հայը՝ իր քանի մը
յառկութիւններովը՝ դեռ նախնական
շատ կը նմանի, որ ինչ գոյնի քով
գնես նոյն գոյնով կ'ըլլայ։ ամիսնե-
րով կրնայ դիմանալ անօթութեան,
և անհարկ տաքութիւններու կը համ-
բերէ։ Հայն ալ, ասոր նման, որ
ազգի մէջ մահէ նոյն ազգին սովո-
րութեանց կը յարմարցնէ ինքզինք,
կամ կը պարտաւորի յարմարցնելու,
ըսին մեզմէ առաջ քանի մը աշխար-
հագէտք, տարիներով և դարերով
թշուառութեանց կը դիմանայ։ և
անհարկ խղճութեանց կը համբեր-
է և համբերելու վրայ է։ Խեղճ
ազգ, օրհնեալ ազգ — աս ինչ օրհ-
նած պահեստ է քու ազգութեանդ
անսպառ պահեստը, որ երբ մէկ
կողմ յորդառատ գուրս հոսելով
կ'ըստովի՝ քու կամիլ առ կամիլ
մէջը թափածդ՝ աեղը կը լեցնէ։
— Թողունք աս խնդիրը մեզմէ լաւ և
փորձառու գրիչներու, ասիկա Ափեղ-
ցիկներն իսկ մտածութեամբը վճռե-
լու նիւթ չէ։

Ուրեմն, դառնալով մեր առաք-
կային, կը նայինք որ երկու սեռեր
նուս մէջն ալ նորասիրութիւնը հա-
ճելի է, և մասամբ մըն ալ լու-
սաւորութիւն սեպուած։ Այս նորա-
սիրութիւնը՝ ընդհանուր կերպով չը
սեղով, ոչ այլ ինչ է, բայց եթէ
Եւրոպայամերձադնացութիւն։ Ուրեմն
այս գրութիւնը բռնելով, նայինք
հեղ մը ինչ կ'ընենք, Եւրոպացին
պարահանգէս կ'ընէ, — Հայն ալ

կրնայ ընել։ Բայց Եւրոպացին իր
բարեկամաց և բարեկամահեաց հետ
խնդակից ըլլալու մտօք կ'ընէ։ Հոգ
չէ, Հայն ալ նոյն մտօք չէ նէ,
գոնէ հազուստ կապուստ ցուցնելու
համար։ Եւրոպացին սիրաբանութիւն
կ'ընէ որ երկու սիրտ իրարու պինտ կա-
պուին — Հայն ալ՝ այնքան կ'ան-
համոզնէ զան, որ վերջապէս խայտա-
ռակութեան կ'ելլէ։ Եւրոպացին իր
քսակին ներածին չափ նորեկազդեստ
է — Հայը և Հայուհին քսակին
ներէ չիներէ նորեկուկը պիտ' ընեն,
ըստ որում նորեկուկ է։

Գնահ, Պաշտօնի և Մեղքի օրի-
կայարանները, Փարասիւօյի և Շիւ-
մեօլտի ձիարշաւները, Միւսիս
Քլլը, Քալիֆօրնի, Պարահանգէս-
ները, Քամարանօյի, Լատերդէի
թէատրոնները, Սուլիի ներկայա-
ցումները, Ռոմպայնսոսներու, Չեռ-
նածուներու, և Քարալիօնի ներ-
կայացումները, հոն պիտի գտնես ու-
տեսնես միշտ այն տեսակ երիտա-
սարգներէ՝ որոնք մերժէին պիտի թէ
որ առաջարկուէր իրենց որ միայն $1/2$
լիրա տարեկան հատուցում մի տան,
ազգային յառաջդիմութեան նպաս-
տող գործի մը համար, թէ և մեծա-
ախորժանօք և փափագանօք հանդա-
նակակից ըլլալու աշխատէին պիտի
միայն մէկ դիշերուան բարեկենդանի
պարահանգէսի մը ստեղծութեան հա-
մար երկ- երկու լիրա քովը միայն։

Ըստնք ըսելով՝ Ափեղցիկը ըսել
չուզեր որ ինքզինքնին զրկեն իրենց
ախորժած հաճութիւններէ, ըսել
չուզեր որ թէատրոն երթալը դէշ
բան է, այլ ասոնց հետ պէտք է
նաեւ հոգայ ազգին կարն որ պիտոյրը։

ԳՈՒՇԱԿԱԶԱՓ։ Այս գործի-
քը կը ծանուցանէ, ինչպէս որ ջեր-
մաշափը բարեխառնութիւնը և ծան-
րաշափը օգին փոփոխութիւնները —
գալիք և ըլլալիք անցքերուն ստուե-
րաստութիւնը, որ շատ օգտակար
կրնայ ըլլալ անդոյշ երիտասար-
դաց։ Այս գործիքը, անցեալ օր
Հանած վառածի և Չրդիկ Դուսիկ
բնակարանի մօտ հոր մը բացուած
ժամանակ գտնուեց է, որու վրայ

գրուած Յունարէն ΑΡΔΑΒΑΣΤΟΥ ΑΡ-
ΜΕΝΙΟΝ խորագրութիւններէն կ'իմա-
նամք որ յունական ճարտար- գործ
մի է, կ'երեւի, ու շատ հաւանական է
որ Ափեղցեան տաճարի քուրմերուն
Արտաւազդայ ըրած մէկ նուէրն է։
Վրոյի գրերը աւրուած չեն, բայց
գրերուն ձևէն կը ցուցնեն որ շատ
հին բան մ'է, որոնք դժուարաւ կը
կարդացուին, աս խորագրութեան տառ-
քանի մը դժուարալոյծ նշանադիւներ
կան, որոնք սեպաձև ըսենք չեն,
ճենաձև ըսենք չեն, և ինչ ձև ու
ինչ լեզուով ըլլալն յայտնի չէ,
որ հաստատենք թէ Հայոց գրերը
գտնուելէ առաջ Հայերը վրան փո-
րագրած են։ Ասոր նիւթը ինչ բա-
նէ ըլլալը յայտնի չէ, մտադ ըսեց
չէ, հոգեղէն ըսեց չէ, ըստ որում
զիւրաբեկ չէ, մէջ աեղը սլաք մ'ու-
նի՝ որ անդադար կը դառնայ, երկու
կըր կարգով շարուած հարեաւոր
ուրիշ սլաքներու վրայէն անցնելով,
աս երկու կարգ սլաքներուն մէկը
ճերմակ է և միւսը սև, ճերմակը,
կը ցուցնէ, ըսին մեզ, ըլլալիք բանե-
րը և պատահուները, մի պա-
տեղով, երկրաշարժ, ամուսնու-
թիւն, մահ, հեղեղ, սով, առատու-
թիւն, ևս և սեւը՝ անցեալը։ Հատ-
բարեբաղդ ենք որ այսպէս գործիք
մը տեսնելէ ու փորձն ալ, ընել
տալէն, ետք, վերջապէս յաջողեցանք
զան ձեռք անցունելու, մեր Զրդիկ-
Դուսիկ և Հանած Վառած բարե-
կամահանգէսն, որոնք որ և իցէ դու-
մար որ ապրինք չի պիտի հաւանէին
տալու բայց եթէ այս պայմանաւ, որ
Ափեղցիկներն մէջ երբեմն երբեմն
զերենք իբրեւ դերասանուհի ներկա-
յացնեմք։ Ապագայից և ապառնեաց
խնամածու Բնկերութիւնները մեծ
գումարներ խոստացան մեզ որ վա-
ճառենք, բայց Ափեղցիկը աս գոր-
ծիքով զանազան դադունիքներ երևան
հանելու ու ճշմարտաստու մարդա-
րէութիւններ ընելու առիթը չիփախ-
ցընելով՝ չուզէր զրկէ ինքզինք ա-
սանկ մէկ հազուադիւս գործքէ մ'որ
անդին է։

Ա. Ափեղցեան և Վեյհարեան
գրքերը կարգաւ ու անոնցմէ խոր-
հուրդ հարցնելու, հարեաւորութիւն

չի մնար Ափեղցիներն :

Ո՛վ որ ուզէ կրնայ Ափեղցիներն Գուշակաչափին խորհուրդ հարցնելու , որ պատրաստ է մեծաւ հաճութեամբ կատարել իրենց կամքը , չնչին դիտով մը :

Ստորագրութիւնները կ'ընդունուին , վեց ամսուան համար , երկու արծաթ մէճիտ . և տարուան համար չորս արծաթ մէճիտ հատուցմամբ :

Գուշակաչափին պատգամները եւ մարգարեութիւնները

1—Հաղար 965ին կանայք շներէ լծեալ կառքերով պիտի ժուռ դան :

2—Հատ հաւանական է , որ Վատուները շատ կ'ուսնենան , այս ձմեռուան մէջ զարմանալի որոտրողութիւններ ընեն կառուարներու մէջ :

3—Մինչև քսան տարի կամ ետքը , իդական սեռը ընկերութիւն մը պիտի կազմէ , որ արական սեռին իրաւանց մասնակից ըլլայ . առնույ մէջ ամէնէ երեւելի կտորները՝ արանց պէս բըժըշկութիւն , զինուորութիւն , բեռնակրութիւն , նաւավարութիւն և ընել ուղեւորին է :

4—Ուսնի հետ արագ և ապահով հաղորդակցութիւն , թէ որ . . .

5—Հըջանի մը լրանալէն ետք մարդիկ այնքան մեծ յառաջդիմութիւններ պիտ' ունենան , որ Տաճկաստանէ մինչև Ամերիկա երթալն ու դալը՝ ժամ մը չպիտի տևէ :

6—Մարդիկ ոսկի հաւիթներ պիտ' ածեն , որոնց վրայ թխսեն պիտի ինսուրն տարեկան օրիորդք , թէ որ ամուսնութիւնն անկարելի ըլլայ նէ :

7—Աստուած , տարիին մէկը՝ անձրևի տեղ ոսկի պիտի տեղացնէ , մինչև որ ծովը իր հրաժարականը տայ :

Ամենախաղ խալի առաւելի մը

Մարդիկ ու անդիկ լուծած քանի մը չաթ - չուրներու համեմատ , կը լըսեմք որ ազդային թերթերու մէջէ՝ անոնք որ արտօնադիր չունին , դադարին պիտի . Վայ զլուսն Գիմակին — ահա խայտառակութիւն — ահա ծանակ — Ուրիշ մէկ կերպով չէր կրնար Գիմակը խայտառակուիլ բայց եթէ այս կերպով : Եւ թէ որ այս

լուսն իրաւ ելէ ու Գիմակն ալ սոյն ճակատագիրը ունենայ , զինք երեսնին անցնողներուն իմաց կու տայ , որ իրենց տուած ստակներն փոխարէն քանի թիւ որ առած ըլլան՝ անոնց արժէքը վար իջնալով , մնացածը իրենց դարձնելու պատրաստ ըլլայ պիտի :

Ահա դար լուսնորութեան որ յառաջագիմութիւնը կ'արդիւնէ :

Մեր չորս արձատր ընթերցողները կը հրաւիրեմք Փարիզ լրագրին 78 թուոյն Ձուեշնը կարդալու :

— Կատանդնու սօսող բարեկամներէս մէկը անցեալ շաբաթ տեսարակ մի իրկած է մեզ , 620 տաճկերէն բարբառական առածներ պարտնակող , զորս քիչիկ քիչիկ թամբմանով մեր ընթերցողաց պիտի հաղորդեմք :

ՀԱՄԱՆՈՏ

ԲՆԱԳԻՐՔ ՍԵՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Յերկուս հատոր

Ի ՀԱՅԵՐԵՆԻ Ի ՀԱՅԵՐԵՆ

ԵՒ

Ի ՀԱՅԵՐԵՆԻ Ի ՍԵՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՀԵՂԻՆԱԿԻՆ Ի ԵՆՏԻՈՒՄԵՆՔՈՒԹԵԱՆ

Սիրարաններն շեջուի բառարանց , ըստ Թախանձանաց ոմանց ճնշկանման ուղեւորաց գլուխ հանելով , ահա այս անգամ կը ներկայացնեն նոյնիսկ հեշինակց հետաքրքիր ընթերցուցաց , որոնք շատոնց գուցէ կ'ըստեանեն որ տեսնեն : Աս բառարանց առաջինն է որ տեղի ունեցած է ազգերմուս մէջ . եւ կը յուսանք որ շերտ ճնդուներովիւն գտնելու է ինչ գեղատեսութեան եւ լի՝ տգեղատեսութեան : Աս դատուական զգոյիլ գրքոյցը՝ բաժանեալ շերկուս մաս , անբաժնելիք մը եւ անմահ անգամանք մի է . աշբերը նոր դաշված դատանիներու . որոնք տեսօթի բարեկիներու դէս աջկանց բոլ ջաշեշու գիւրութիւնց գիտեն :


Գառ անգամ գուցէ կամ , թեք գառ անգամ չէ . աւելի կայ անգամի մը լիցշով , դիտ' ըսկսիք Գիմակին Ափեղցիէ գեմբին մէջ կարգաշու . ի Սիրարաններն շեջուի յԱճխարհարար , եւ երբոր կը շննցներ այս կ'ըսկսիք յԱճխարհարարէ ի Սիրարաններն :

Այս ցատ տգուած երկու հատար փարագիր եւ փոքրաթիւ բառարանք կը գրանուի :

Բարբառական Առածներու թաղը . Գ . Խըրատատու ին խառութը . Թ . 9

Գին 1 ու կէս խոհմութիւն , հին գլուխ տակով . ու կէս խոհմութիւն . նորոց խոյրին տակով :

Եւ կ'ըսուի թէ ասոր նայելով բան մը սրամակէր ինչացիներ ազգային կուռոց , քիճաբանութեանց , տարբերութեանց , հակառակութեանց , եւ այլն եւ ասոնց ցարման երուս բառարան մը դիտի շննեն :



ԹԵՐԹ ԶԱՆԱԶԱՆԵՑ

Ա.Զ.Ա.ՅԻՆ

Չմիտնիոյ Աղբատասիրաց ընկերութեան սոյն տարույս Օգոստոսի սկիզբէն Հոկտեմբերի վերջը կնքող երկրորդ եռամսեայ Հաշուեցուցակը և Տեղեկագիրը՝ ճիշդ տպուած ու ցրուած է , որու մէջ թուաւոր անձանց ձեռնադրութիւնները և նուէրները կը տեսնեմք որ 30,333 - 50 զրշի կը հասնի : Իր եռամսեայ եկամուտը 29,636 - 45 է . որոնց 5287ն , իր ձեռք խնամած հիւանդաց համար՝ բըժըշկի , գեղարդի , սպասաւորի և այլ և այլ հարկաւորութեանց ծախած է , և մնացորդ 24,369 - 45 է , 1980 - 50ը դրամակիւն է և միւս մասը ՚ի վաշխու և ժողովելի ստակ :

Տեղեկագրէն կը տեսնեմք , որ այս եռամսոյն մէջ 162 հիւանդ խնամք է , որոնց 30ը անցեալ եռամսէն են : Սոյն 162 հիւանդներէ 136ը կատարեալապէս առողջացած են , 20ը դեռ հիւանդք և 6ն մեռեալք , որ անցեալ եռամսէն մէկ պակաս է :

ԻՌԱՏԱԲԱՆԱԿԱՆ

Նոյնմբեր ամսուան մէջ ծագկանց խնամք

Մեր ինքնաշնորհ յարգաւորած Վաշիկիւն

ՊԱՐՏԷԶ : Հարունակէ պարտեղիդ մէջ հողերը նորոգելը , և ուր որ հարկաւոր է պարարտութիւն խառնելը :

Նաղկոյններու մէջ մնացած ցրտեղակոյտ տունկերդ հասնէ ու թաղարներու մէջ առնելով՝ ձմերոցդ դիմ , որ ձմեռուան սաստկութեան չչորնան : Ճամբաներուն մէջ աւաղախիճ թափել տուր հարկաւոր եղած տեղերը : Նաղկոյններու բոլորակը եղած յարատեւ շրջաքոյսերդ (bordures) մկրատէ և հարկ եղած ու չորցած տեղերը նոր տնկէ : Պարտեղիդ մէջ որքան թափած տեղերն կան՝ հաւքել տուր ու դիպէ անկիւն մը որ փտտին , որոնք ետք անդին պարարտութիւն մը կ'ըլ-

